ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

ՊԱՐՈՆ ԱՐԱ ՖԻԴԱՆՅԱՆԻՆ

ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ

ԻՐԱՎԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԳԾՈՎ ՓՈՐՁԱԳԵՏ

ԱՐՇԱԿ ԹՈՎՄԱՍՅԱՆԻՑ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Հաշվետու ժամանակահատվածում, հուլիսի 27-ից դեկտեմբերի 26-ը, իրականացրել եմ ներքոգրյալ աշխատանքները.

1. իրավական փորձաքննության եմ ենթարկել Ներքին գործերի նախարարության իրավաբանական վարչության կողմից ներկայացված ՀՀ օրենքների, ՀՀ կառավարության և ՀՀ վարչապետի որոշումների նախագծեր՝ դրանց վերաբերյալ ներկայացնելով կարծիքներ, այդ թվում՝

1) «Հայաստանի հանրապետության կառավարության 2021 թվականի դեկտեմբերի 16-ի N 2087-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծ.

2) «Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի նոյեմբերի 10-ի N 1711-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծ.

3) Իրավական փորձաքննության եմ ենթարկել և արել մի շարք առաջարկություններ վարչական իրավախախտումների վերաբերյալ նոր օրենսգրքի մշակման վերաբերյալ:

2. մասնակցել եմ Նախարարությունում կազմակերպված Նախարարության կառուցվածքային ստորաբաժանումների կանոնադրությունների քննարկման

աշխատանքներին, որի արդյունքում մշակել և լրամշակել եմ ներքոնշյալ կանոնադրությունների նախագծերը՝

1) ռազմավարական պլանավորման, քաղաքականության մշակման և մոնիթորինգի վարչության.

2) ծառայությունների մատուցման որակի վերահսկողության վարչության.

3) հաշվառման-քննական ծառայությունների մատուցման, թույլտվությունների և լիցենզավորման վարչության.

4) ներքին անվտանգության և հակակոռուպցիոն վարչության.

4. իրավական փորձաքննության եմ ենթարկել Ոստիկանության ինֆորմացիոն կենտրոնի կանոնադրությունը:

Արշակ Թովմասյան

Հաշվետու ժամանակաշրջանում կատարված աշխատանքները գնահատում եմ

«----------»

ՀՀ ՆԳՆ Գլխավոր քարտուղար Ա. Ֆիդանյան